

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**

**ՆՏՔԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ
ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ**

Ֆինլանդիայի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, ընդունելով մի Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները առանց խտրականության պաշտպանելու ամերածեշտությունը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում,

ցանկանալով խրախուսել երկարատև տնտեսական համագործակցությունը իրենց միջև՝ կապված մի Պայմանավորվող կողմի քաղաքացիների և ընկերությունների ներդրումների հետ, որոնք կատարվել են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում,

ընդունելով, որ այդ ներդրումների համար ռեժիմ սահմանող համաձայնագիրը կխրախուսի Կողմերի մասնավոր կապիտալի հոսքերը և տնտեսական զարգացումը,

համաձայնելով, որ ներդրումների հետ կապված օրենսդրության կայունացումը կնպաստի տնտեսական ռեսուրսների առավելագույն արդյունավետ օգտագործմանը և կենսամակարդակի բարելավմանը,

ընդունելով, որ տնտեսական և գործարար կապերը կարող են խրախուսել միջազգայնորեն ընդունված աշխատանքային իրավունքների պահպանումը,

համաձայնելով, որ այդ նպատակներին կարելի է հասնել՝ չխանգարելով առողջապահության, անվտանգության և բնապահպանական միջոցների ընդհանուր կիրառմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

**ՀՈՂՎԱԾ 1
Սահմանումներ**

Սույն Համաձայնագրի նպատակով.

1. «ներդրում» տերմինը նշանակում է՝ գույքի բոլոր տեսակները, որոնք հիմնարկվել կամ ձեռք են բերվել մի Պայմանավորվող կողմի ներդրողի կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ վերջինիս օրենսդրության համապատասխան, ներառելով, մասնավորապես, սակայն ոչ բացառապես.

ա) շարժական և անշարժ գույքը կամ բոլոր գույքային իրավունքները, ինչպիսիք են գրավները, պարտապանի գույքի վրա կալանք դնելու իրավունքները, վարձակալական պայմանագրերը, ուրիշի գույքից օգտվելու իրավունքը (usufruct) և նման իրավունքները,

բ) ընկերության բաժնետոմսերը, բաժնեմասերը և պարտատոմսերը կամ ընկերությունում մասնակցության որևէ այլ ձևը,

զ) դրամական պահանջները կամ տնտեսական արժեք ունեցող պարտավորության գծով պահանջների իրավունքը,

դ) մտավոր սեփականության իրավունքները, ինչպիսիք են պատենտները, հեղինակային իրավունքները, ապրանքային նշանները, արդյունաբերական նախագծերը, ֆիրմայի անվանումները, աշխարհագրական նշումները, ինչպես նաև տեխնիկական գործընթացները, «նոու-հաուն» ու բարի համբավը, և

ե) օրենսդրությամբ, վարչական ակտով կամ իրավասու մարմնի կողմից հաստատված կոնտրակտով տրամադրված կոնցեսիաները՝ ներառյալ բնական պաշարների հետախուզման, հանքանշակման կամ շահագործման կոնցեսիաները:

Մի Պայմանավորվող կողմի տարածքում այդ Պայմանավորվող կողմի որևէ իրավաբանական անձի կողմից կատարված ներդրումները, որոնք փաստորեն պատկանում կամ վերահսկվում են մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից, պետք է նույնպես համարվեն վերջինը նշված Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներ, եթե դրանք կատարվել են առաջինը նշված Պայմանավորվող կողմի օրենսդրության համապատասխան:

Ակտիվների ներդրման կամ վերաներդրման ձևի որևէ փոփոխություն չի ազդի դրանց դիտարկմանը որպես ներդրումների:

2. «Եկամուտներ» տերմինը նշանակում է՝ ներդրումների արդյունքում գոյացած գումարները և մասնավորապես, սակայն ոչ բացառապես պետք է ներառի շահույթը, շահաբաժինները, տոկոսավճարները, ռոյալթիները, կապիտալի աճը կամ ներդրումների հետ կապված ցանկացած վճարումը:

Վերաներդրված եկամուտներին պետք է տրամադրվի նույն ռեժիմը, որը տրամադրվում է ներդրումներին:

3. «Ներդրող» տերմինը յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար նշանակում է՝ հետևյալ սուբյեկտները, որոնք ներդրում են կատարում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ վերջինիս օրենսդրությանը և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան.

ա) ցանկացած ֆիզիկական անձ, որը Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի է նրա օրենսդրությանը համապատասխան, կամ

բ) ցանկացած իրավաբանական անձ, ինչպիսին է ընկերությունը, կորպորացիան, ֆիրման, բիզնես ընկերակցությունը, հաստատությունը կամ կազմակերպությունը, որոնք ձևավորվել կամ հիմնվել են մի Պայմանավորվող կողմի օրենսդրության համապատասխան և այդ Պայմանավորվող կողմի իրավագործության սահմաններում ունեն իրենց գրանցված գրասենյակը կամ կենտրոնական կառավարման կենտրոնը կամ աշխատանքի կենտրոնական վայրը՝ անկախ նրանից՝ դրանք ստեղծվել են շահույթ ստանալու նպատակով, թե ոչ, և սահմանափակ պատասխանատվությամբ են, թե ոչ:

4. «Տարածք» տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող կողմի ցամաքային տարածքը, ներքին ջրերն ու տարածքային ծովը և օդային տարածքը, ինչպես նաև տարածքային ծովից դուրս գտնվող ծովային գոտիները (ներառյալ մերձափնյա և ստորջրյա տարածքները), որոնց նկատմամբ այդ Պայմանավորվող կողմը իրականացնում է ինքնիշխան իրավունքներ կամ իրավագործություն, համաձայն իր գործող ազգային օրենսդրության և միջազգային իրավունքին համապատասխան, այդ տարածքների բնական պաշարների հետագոտման և շահագործման նպատակով:

ՀՈՂՎԱԾ 2

Ներդրումների խրախուսումը և պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է խրախուսի իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները և պետք է ընդունի այդ ներդրումները՝ իր օրենսդրության համապատասխան:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին և դրանցից ստացված եկամուտներին պետք է տրամադրի արդար և հավասար ռեժիմ և լիարժեք ու մշտական պաշտպանություն ու անվտանգություն: Ամեն դեպքում Պայմանավորվող կողմը չպետք է տրամադրի այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ է, քան այն ռեժիմն է, որը պահանջվում է միջազգային իրավունքով:

3. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը իր տարածքում անընդունելի կամ կամայական միջոցներով չպետք է խոչընդոտի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների ձեռքբերմանը, ընդլայնմանը, գործողության մեջ դնելու, կառավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, տիրապետմանն ու վաճառքին կամ այլ կերպ տնօրինմանը:

ՀՈՂՎԱԾ 3

Ներդրումների ռեժիմը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին պետք է տրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նա տրամադրում է իր ներդրողներին և նրանց ներդրումներին՝ կապված ներդրումների ձեռքբերման, ընդլայնման, գործողության մեջ դնելու, կառավարման, պահպանման, օգտագործման, տիրապետման ու վաճառքի կամ այլ կերպ տնօրինելու հետ:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին պետք է տրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նա տրամադրում է առավել բարենպաստ ազգի ռեժիմից օգտվող ներդրողներին և նրանց ներդրումներին՝ կապված ներդրումների հիմնադրման, ձեռքբերման, ընդլայնման, գործողության մեջ դնելու, կառավարման, պահպանման, օգտագործման, տիրապետման և վաճառքի կամ այլ կերպ տնօրինելու հետ:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին պետք է տրամադրի սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով պահանջվող ռեժիմներից այն լավագույնը, որը առավել բարենպաստ է ներդրողների կամ ներդրումների համար:

4. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չպետք է իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ կիրառի հարկադիր միջոցներ՝ կապված հումքի, արտադրության միջոցների ձեռքբերման, գործողության մեջ դնելու, փոխադրման, իր արտադրանքի մարկետինգի կամ մասն կարգի միջոցների հետ, որոնք ընդունելի չեն կամ խտրական են:

ՀՈՂՎԱԾ 4
Բացառություններ

Սույն Համաձայնագրի դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, թե մի Պայմանավորվող կողմը պարտավոր է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների և նրանց ներդրումների նկատմամբ կիրառել ցանկացած ռեժիմի առավելությունը, գերակայությունը կամ արտոնությունը, որոնք բխում են.

ա) ցանկացած առկա կամ ապագա ազատ առևտրի գոտում, մաքսային միությանը, ընդհանուր շուկային, տնտեսական և արժույթային միությանը կամ այլ մնացած տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն համաձայնություններին (ներառյալ տարածաշրջանային աշխատանքային շուկայի վերաբերյալ համաձայնությունները) Պայմանավորվող կողմերից մեկի՝ ներկայումս կողմի լիմեյուց կամ հետագայում կողմ դառնալուց, կամ

բ) կրկնակի հարկումից խուսափելու մասին ցանկացած համաձայնագրից կամ հարկմանը վերաբերող այլ միջազգային համաձայնագրից, կամ

գ) ցանկացած բազմակողմ համաձայնագրից, որը ամբողջովին կամ հիմնականում վերաբերում է ներդրումներին:

ՀՈՂՎԱԾ 5
Օտարում

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում չպետք է օտարվեն, բռնագրավվեն ազգայնացվեն կամ այլ միջոցառումների առարկա դառնան, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ունեն բռնագրավմանը կամ ազգայնացմանը համարժեք ազդեցություն (այսուհետ՝ օտարում)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը բխում է հասարակության կարիքներից, իրականացվում է առանց խտրականության, օրենսդրության հիման վրա և.

ա) կատարվում է արագ, համարժեք և արդյունավետ փոխհատուցմամբ, երբ օտարումը իրականացվում է Ֆինլանդիայի Հանրապետության տարածքում, և

բ) ուղեկցվում է նախնական, համարժեք և արդյունավետ փոխհատուցմամբ, երբ օտարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Նման փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրման արժեքին օտարումից անմիջապես առաջ կամ մինչև այն պահը, երբ նախատեսվող օտարման մասին հայտնի է դարձել հանրությանը՝ նայած, թե որն է ավելի շուտ է եղել: Արժեքը պետք է գնահատել համընդհանուր ճանաչում գտած գնահատման սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով ներդրված կապիտալը, փոխհատուցման արժեքը, արժեքի բարձրացումը, ընթացիկ եկամուտները, սպասվելիք եկամուտների նախատեսվող աճը, բարի համբավը և այլ համապատասխան գործոնները:

3. Փոխհատուցումը պետք է ամբողջովին իրականանալի լինի և պետք է վճարվի առանց ուշացման: Այն պետք է ներառի վճարման տարադրամի համար

շուկայական հիմքի վրա ձևավորված առևտրային ընթացագրով տոկոսը՝ սկսած գույքի օտարման օրվանից մինչև փաստացի վճարումը:

4. Երբ Պայմանավորվող կողմը օտարում է այն ընկերության ակտիվները, որը հիմնադրվել կամ ձևավորվել է այդ Պայմանավորվող կողմի տարածքում գործող օբեկտիվության համապատասխան, և որում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողները ունեն բաժնետոմսեր, մա պետք է երաշխավորի, որ սույն հոդվածի 1-ինից 3-րդ կետերի դրույթները կկիրառվեն այն չափով, որը ամհրաժեշտ է երաշխավորելու համար փոխհատուցման վճարումը՝ կապված մյուս Պայմանավորվող կողմի այն ներդրողների ներդրումների հետ, որոնք այդ բաժնետոմսերի սեփականատերերն են:

5. Այն դեպքում, երբ օտարման առարկան համատեղ ձեռնարկություն է, որը հիմնադրված է Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում, ապա մյուս Պայմանավորվող կողմի ներդրողին վճարվող փոխհատուցումը պետք է հաշվարկել՝ հաշվի առնելով ներդրողի բաժնեմասը համատեղ ձեռնարկությունում՝ այդ ձեռնարկության հիմնական փաստաթղթերին համապատասխան:

6. Այն ներդրողը, որի ներդրումները օտարվում են, պետք է ունենա իր գործի շուտափույթ քննության և իր ներդրումների գնահատման իրավունք համապատասխան Պայմանավորվող կողմի դատական կամ այլ իրավասու մարմնի կողմից՝ սույն հոդվածում սահմանված սկզբունքներին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 6 Վնասների փոխհատուցումը

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնց ներդրումները վնասներ են կրում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պատերազմի կամ այլ զինված հակամարտության, արտակարգ իրավիճակների, ապստամբության կամ խռովության հետևանքով, կապված վնասների վերականգնման փոխհատուցման կամ այլ կերպ կարգավորման հետ՝ վերջինը նշված Պայմանավորվող կողմի կողմից կտրամադրվի այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը այդ Պայմանավորվող կողմը տրամադրում է իր ներդրողներին կամ առավել բարենպաստ ազգի ռեժիմից օգտվող ներդրողներին, և որը առավել բարենպաստ է ներդրողի համար:

2. Առանց խախտելու սույն հոդվածի 1-ին կետի դրույթները՝ մի Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնք այդ կետում նշված ցանկացած իրավիճակի հետևանքով վնասներ են կրում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, որոնք հետևանք են.

ա) վերոհիշյալ Պայմանավորվող կողմի զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց ներդրման կամ դրանց մի մասի բռնագրավման, կամ

բ) վերոհիշյալ Պայմանավորվող կողմի զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց ներդրման կամ դրանց մի մասի ոչնչացման, որը չի բխել իրավիճակի ամհրաժեշտությունից,

վերոհիշյալ Պայմանավորվող կողմը պետք է արագ, համարժեք և արդյունավետ վերականգնի կրած վնասները կամ փոխհատուցի դրանք, և նշված վնասից բխող ցանկացած փոխհատուցում պետք է լինի ամբողջովին իրականացնելի, վճարվի առանց ուշացման և ներառի վճարման տարադրամի համար

շուկայական հիմքի վրա ձևավորված առևտրային ընթացագրով տոկոսը՝ սկսած ներդրումների բռնագրավման կամ ոչնչացման օրվանից մինչև փաստացի վճարման օրը:

3. Ներդրողները, որոնց ներդրումները վնասներ են կրում սույն հոդվածին համապատասխան, պետք է իրավունք ունենան իրենց գործի արագ քննության և իրենց ներդրումների գնահատման համապատասխան Պայմանավորվող կողմի դատական կամ այլ իրավասու մարմնի կողմից՝ սույն հոդվածում սահմանված սկզբունքներին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 7

Ազատ փոխանցումներ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է երաշխավորի դեպի իր տարածք և իր տարածքից դուրս մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների ազատ փոխանցումները: Ներդրումների հետ կապված փոխանցվող վճարումները կներառեն մասնավորապես, սակայն ոչ բացառապես.

ա) ներդրման պահպանման, զարգացման կամ ընդլայնման համար անհրաժեշտ հիմնական և լրացուցիչ գումարները,

բ) եկամուտները,

գ) ներդրման ամբողջական կամ մասնակի վաճառքից կամ այլ կերպ տնօրինելուց ստացվող միջոցները (ներառյալ բաժնետոմսերի վաճառքը),

դ) ներդրումների հետ կապված գործարքներից բխող ծախսերի կատարման համար պահանջվող գումարները, ինչպիսիք են փոխառությունների հետվճարումը, ռոյալթիների հետ կապված վճարումները, կատարարման հետ կապված վճարումները, արտոնագրման վճարները կամ այլ նմանատիպ ծախսերը,

ե) փոխհատուցման գումարը, որը նախատեսված է 5-րդ և 6-րդ հոդվածներով,

զ) վեճի կարգավորումից բխող վճարումները,

է) ներդրումների ոլորտում աշխատող օտարերկրյա աշխատողների աշխատավարձերի գումարները և այլ վճարումները:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է հետագայում երաշխավորի, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված փոխանցումները պետք է իրականացվեն առանց որևէ սահմանափակման կամ ուշացման, ազատ փոխարկելի տարադրամով և փոխանակման շուկայական գերակայող ընթացագրով, որը կիրառելի է փոխանցման իրականացման օրը այն տարադրամի նկատմամբ, որը փոխանցվելու է և պետք է ամփոփապես փոխանցելի լինի:

3. Տարադրամի փոխանակման համար շուկայի բացակայության դեպքում օգտագործվող դրույքաչափը կլինի Փոխառության հատուկ իրավունքներում (Special Drawing Rights) օգտագործվող տարադրամի փոխանակման ամենավերջին դրույքաչափը:

4. Եթե ընդունող Պայմանավորվող կողմը ուշացնի փոխանցումը, փոխանցումը կներառի նաև համապատասխան տարադրամի շուկայական առևտրային տոկոսադրույքը՝ հաշվարկված փոխանցում կատարելու պահանջը ներկայացնելու օրվանից մինչև փաստացի փոխանցման օրը:

ՀՈՂ-ՎԱՄԾ 8
Սուրբոգացիա

Եթե մի Պայմանավորվող կողմը կամ նրա նշանակած գործակալությունը վճարում է կատարում վնասներ չկրելու երաշխիքով, երաշխավորությամբ կամ ապահովագրական կոնտրակտով մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարված ներդրումների կապակցությամբ, ապա վերջինը նշված Պայմանավորվող կողմը պետք է ճանաչի այդ ներդրողի կողմից առաջինը նշված Պայմանավորվող կողմին կամ նրա նշանակած գործակալությանը որևէ իրավունքի կամ պահանջի փոխանցումը, ինչպես նաև այդ Պայմանավորվող կողմի կամ նրա նշանակած գործակալության իրավունքը՝ իրականացնել սուրբոգացիայի ուժով որևէ նման իրավունք և պահանջ նույն ծավալով, ինչ իր նախորդը՝ սեփականության իրավունքի ուժով:

ՀՈՂ-ՎԱՄԾ 9

Մի Պայմանավորվող կողմի ներդրողի և մյուս Պայմանավորվող կողմի միջև վեճերը

1. Մի Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև ծագած՝ ներդրման հետ կապված ցանկացած վեճ պետք է վեճի կողմերի միջև կարգավորվի բարեկամաբար:

2. Վեճի կարգավորման ամենաբինության դեպքում գրավոր ծանուցումից հետո՝ երեք (3) ամսվա ընթացքում, այն ներդրողի հայեցողությամբ կարող է ներկայացվել.

ա) այն Պայմանավորվող կողմի իրավասու դատարաններին, որի տարածքում կատարվել է ներդրումը, կամ

բ) Ներդրումների վերաբերյալ վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ՆՎՎԿՄԿ) միջնորդ դատավարությանը, որը հիմնվել է «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումների վերաբերյալ վեճերի կարգավորման մասին» կոմիտեի համաձայն, որը բաց է ստորագրման համար 1965 թ. մարտի 18-ից՝ Վաշինգտոնում (այսուհետ՝ Կենտրոն), եթե Կենտրոնին դիմելը հնարավոր է, կամ

գ) միջնորդ դատավարության՝ Կենտրոնի լրացուցիչ կանոնների համաձայն, եթե միայն Պայմանավորվող կողմերից մեկը ստորագրել է սույն հոդվածի «բ» ենթակետում նշված կոմիտեի, կամ

դ) վեճի կարգավորման՝ մախկինում համաձայնեցված և կիրառելի ցանկացած ընթացակարգին համապատասխան, կամ

ե) որևէ ad hoc միջնորդ դատարանի, որը, եթե վեճի կողմերի կողմից այլ որոշում չի ընդունվել, կստեղծվի Միավորված ազգերի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) հաշտեցման մասին կանոնների համաձայն:

3. Սույն հոդվածի համաձայն՝ ցանկացած միջնորդ դատավարություն վեճի յուրաքանչյուր կողմի պահանջով պետք է անցկացվի այն պետությունում, որը Նյու Յորքի կոմիտեի կողմ է: Սույն հոդվածի համաձայն ներկայացված հայցերը պետք է քննվեն որպես առևտրային հարաբերություններից կամ գործառնություններից ծագած՝ ելնելով Նյու Յորքի կոմիտեի 1-ին հոդվածի նպատակներից:

4. Այն ներդրողը, որը վեճը ներկայացրել է ազգային դատարանի քննությանը, կարող է, այնուամենայնիվ, դիմել սույն հոդվածի 2-րդ կետի «բ»-

«ե» ենթակետերում նշված միջնորդ դատարաններից մեկին, եթե մինչև ազգային դատարանի կողմից համապատասխան գործի վերաբերյալ վճիռ կայացնելը ներդրողը հայտարարել է, որ այլևս չի շարունակում գործի քննությունը ազգային ընթացակարգերով և հետ է վերցնում այն:

5. Սույնով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անվերապահորեն համաձայնում է իր և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև ծագած վեճը կարգավորման համար ներկայացնել միջազգային միջնորդ դատարան՝ սույն հոդվածին համապատասխան:

6. Վեճի կողմ Պայմանավորվող կողմերը չեն կարող միջնորդ դատարանության կամ միջնորդ դատարանի վճռի կատարման ցանկացած փուլում առարկել այն հանգամանքի վերաբերյալ, որ վեճի մյուս կողմ ներդրողը ապահովագրության հիման վրա ստացել է իր վնասների մասնակի կամ լիարժեք փոխհատուցում:

7. Միջնորդ դատարանի վճիռը վերջնական է, պարտադիր վեճի կողմերի համար, այն պետք է կատարվի այն Պայմանավորվող կողմի ազգային օրենսդրության համապատասխան, որի տարածքին վերաբերում է, այդ Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների կողմից՝ այն ժամկետում, որը պատշաճ կերպով նշված է վճռում:

ՀՈԳ-ՎԱԾ 10

Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող վեճեր

1. Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը հմարավորության սահմաններում պետք է կարգավորվեն դիվանագիտական ուղիներով:

2. Պայմանավորվող կողմերից մեկի կողմից բանակցություններ սկսելու խնդրանք ներկայացվելու օրվանից հետո վերոհիշյալ ձևով վեճը վեց (6) ամսվա ընթացքում կարգավորելու ամենարհմության դեպքում, Պայմանավորվող կողմերից մեկի խնդրանքով, այն պետք է ներկայացվի միջնորդ դատարան:

3. Յուրաքանչյուր առանձին դեպքի համար միջնորդ դատարանը կստեղծվի հետևյալ կերպով: Վեճը կարգավորման համար միջնորդ դատարան ներկայացնելու խնդրանքը ստանալուց հետո՝ երկու (2) ամսվա ընթացքում, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նշանակի դատարանի մեկ անդամի: Այնուհետև այս երկու անդամները կընտրեն երրորդ պետության քաղաքացու, որը երկու Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ պետք է նշանակվի դատարանի նախագահ: Նախագահը պետք է նշանակվի չորս (4) ամսվա ընթացքում՝ սկսած մյուս երկու անդամների նշանակման օրվանից:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամանակահատվածներում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում, այլ համաձայնության բացակայության դեպքում Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է հրավիրել Արդարադատության միջազգային դատարանի նախագահին՝ անհրաժեշտ նշանակումները կատարելու համար: Եթե Արդարադատության միջազգային դատարանի նախագահը Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի է, կամ եթե նա չի կարող կատարել վերոհիշյալ նշանակումները, ապա անհրաժեշտ նշանակումները կատարելու համար պետք է հրավիրվի Արդարադատության միջազգային դատարանի՝ ավագության կարգով հաջորդ անդամը, որը Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի չէ, կամ որի համար չկա այլ խաչընդոտ նշված գործառույթները կատարելու համար:

5. Միջնորդ դատարանը իր վճիռը կայացնում է ձայների մեծամասնությամբ: Դատարանի վճիռները վերջնական են և պարտադիր Պայմանավորվող կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կրում է իր կողմից նշանակված անդամի և միջնորդ դատավարության գործընթացներում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Նախագահի, ինչպես նաև այլ ծախսերը հավասարապես բաշխվում են Պայմանավորվող կողմերի միջև: Միջնորդ դատարանը կարող է գործի քննության արդյունքում այլ որոշում կայացնել Պայմանավորվող կողմերի միջև ծախսերի բաշխման վերաբերյալ: Բոլոր այլ հարցերի հետ կապված՝ միջնորդ դատարանը սահմանում է ընթացակարգի իր կանոնները:

6. Սույն հոդվածի 1-ին կետում նշված վեճի առարկա հանդիսացող հարցերը պետք է կարգավորվեն սույն Համաձայնագրի դրույթներին և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 11

Թույլտվություններ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, համաձայն իր օրենսդրության, պատշաճ ձևով կքննի ներդրումներին վերաբերվող դիմումները և առանց ուշացման կհատկացնի անհրաժեշտ թույլտվությունները, որոնք պահանջվում են իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից կատարված ներդրումների համար:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր օրենսդրության համաձայն, պետք է տրամադրի մուտքի վիզա, իր տարածքում գտնվելու համար անհրաժեշտ և ցանկացած այլ փաստաթուղթ այն ֆիզիկական անձանց, որոնք, մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումների հետ կապված, որպես գործադիր ղեկավարներ, կառավարիչներ, մասնագետներ կամ տեխնիկական անձնակազմ, աշխատանքի են վերցվել արտասահմանից, և որոնք կազմում են ձեռնարկության կարևոր մասը, քանի ղեռ այդ անձինք շարունակում են համապատասխանել սույն կետի պահանջներին, ինչպես նաև՝ տրամադրել մուտքի ժամանակավոր վիզա և յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում ժամանակվորապես գտնվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր նրանց ընտանիքների անդամներին (կին, ամուսին և երեխաներ) մույն ժամկետով, որով աշխատանքի են վերցվել վերոհիշյալ աշխատողները:

ՀՈՂՎԱԾ 12

Այլ կանոնների կիրառումը

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ընդունվելուց հետո առաջինը նշված Պայմանավորվող կողմի կողմից ընդունված ցանկացած իրավական ակտ չպետք է հետապնդի այդպիսի ներդրման գործողությունը ընդհատելու կամ արգելելու կամ այն ապօրինի դարձնելու նպատակ: Այդպիսի դեպքերում փոխհատուցումը պետք է սահմանվի և վճարվի համաձայն սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածին:

2. Եթե յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենսդրության դրույթները կամ, միջազգային իրավունքի համաձայն, Պայմանավորվող կողմերի ստանձնած կամ հետագայում ի լրումն սույն Համաձայնագրի ստանձնելիք

պարտավորությունները ներառում են ընդհանուր կամ հատուկ կարգավորում, որը մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին տրամադրում է առավել բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը տրամադրվում է սույն Համաձայնագրով, ապա այդ դրույթները այն ծավալով, որը առավել բարենպաստ է ներդրողի համար, պետք է գերակայեն սույն Համաձայնագրի նկատմամբ:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է կատարի ցանկացած այլ պարտավորություն, որը կաջող է ունենալ՝ կապված մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի հատուկ ներդրման հետ:

Հոդված 13

Սույն Համաձայնագրի կիրառումը

1. Սույն Համաձայնագիրը պետք է կիրառվի ներդրողների բոլոր այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո, բայց չպետք է կիրառվի ներդրման հետ կապված որևէ վեճի նկատմամբ, որը ծագել է մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, կամ որևէ հայցի նկատմամբ, որը բավարարվել է մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

2. Սույն Համաձայնագրի դրույթները պետք է կիրառվեն՝ անկախ Պայմանավորվող կողմերի միջև գոյություն ունեցող պաշտոնական հարաբերություններից:

ՀՈՂՎԱԾ 14

Ընդհանուր բացառություններ

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող կողմի համար խոչընդոտ՝ ձեռնարկելու ցանկացած գործողություն, որը անհրաժեշտ է պատերազմի կամ զինված հակամարտության կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակի դեպքում՝ իր էական անվտանգության շահերը պաշտպանելու համար:

2. Պայմանով, որ նշված գործողությունները Պայմանավորվող կողմի կողմից չեն կիրառվի կամայական կամ չիմնավորված խտրականության ձևով կամ ներդրումների քողարկված սահմանափակումներով, սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող կողմերի համար խոչընդոտ՝ ձեռնարկելու որևէ միջոց, որը անհիմաժեշտ է հասարակական կարգը պահպանելու համար:

3. Սույն հոդվածի դրույթները չպետք է կիրառվեն սույն Համաձայնագրի 5-րդ կամ 6-րդ հոդվածների նկատմամբ:

ՀՈՂՎԱԾ 15

Համապատասխան տեղեկության տրամադրումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ամփոփապես հրատարակի կամ այլ կերպ հասարակությանը մատչելի դարձնի իր ընդհանուր կիրառման օրենսդրությունը, ընթացակարգերը, վարչական որոշումները և դատական

վճիռները, ինչպես նաև այն միջազգային համաձայնագրերը, որոնք կարող են ազդել մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների վրա առաջինը նշված Պայմանավորվող կողմի տարածքում:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է պարտավորեցնի Պայմանավորվող կողմին՝ տրամադրել կամ թույլ տալ օգտվել ցանկացած գաղտնի կամ որևէ մեկի սեփականությունը հանդիսացող տեղեկատվությունից (ներառյալ կոնկրետ ներդրողներին կամ ներդրումներին վերաբերող տեղեկատվությունը), որի հրապարակումը կխոչընդոտի օրենքի կատարմանը կամ կհակասի գաղտնիքի պաշտպանության վերաբերյալ նրա օրենքներին կամ կվնասի կոնկրետ ներդրողների օրինական առևտրային շահերը:

ՀՈԴՎԱԾ 16

Փոփոխություններ և լրացումներ

Պայմանավորվող կողմերը փոխհամաձայնությամբ կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ և լրացումներ: Այդ փոփոխությունները և լրացումները պետք է ձևակերպվեն լրացուցիչ արձանագրություններով, որոնք 18-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 17

Խորհրդակցություններ

Պայմանավորվող կողմերը, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի խնդրանքով, պետք է խորհրդակցություններ անցկացնեն սույն Համաձայնագրի իրականացումը և սույն Համաձայնագրից բխող ցանկացած հարց քննարկելու նպատակով: Այդ խորհրդակցությունները պետք է անցկացվեն Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև համապատասխան ուղիներով համաձայնեցված վայրում և ժամկետներում:

ՀՈԴՎԱԾ 18

Ուժի մեջ մտնելը, տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Պայմանավորվող կողմերի՝ սահմանադրական պահանջների կատարման մասին վերջին ծանուցումը ստանալու օրվանից հետո՝ երեսուներորդ օրը:


2. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա քսան (20) տարի և այնուհետև ուժի մեջ կմնա նույն ժամկետով, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց տասներկու (12) ամիս առաջ գրավոր չժամուցի մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի գործողության դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը, սույն Համաձայնագրի 1-16-րդ հոդվածների դրույթները պետք է շարունակեն գործել սույն Համաձայնագրի դադարեցումից հետո՝ հաջորդ քսան (20) տարվա ժամկետում:

Ի վկայություն վերոհիշյալի՝ ներքոհիշյալ ներկայացուցիչները, լինելով պատշաճ ձևով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 2004 թ. հոկտեմբերի -ին, երկու բնօրինակով, ֆիններեն, հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարածաշրջանի դեպքում մախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ՝

